



**ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ԱՐԵՒԱԳԱԼԻ
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՈՑ**

Գաւաւորեց
ՎԱՐԳԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Անգլերէնի քարգմանեց
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՍ. ՆԵՐՍՈՑԵԱՆ

Հրատարակեց
ԹՈՐԳՈՄ ՎՐԴ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



ԵՐՈՒՍԱԼԵՄ
ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1957

**HYMNS OF SUNRISE OFFICE
OF THE
ARMENIAN APOSTOLIC ORTHODOX CHURCH**

HARMONIZED BY
WARDAN SARXIAN

ENGLISH TRANSLATION BY
ARCHBISHOP TIRAN NERSOYAN

PUBLISHED BY
TORKOM VARTABED MANOOGIAN



JERUSALEM
ST. JAMES' ARMENIAN MONASTERY
1957

ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Առաջին անգամն է որ Հայց. Եկեղեցւոյ Արեւագալի երգերը կը հրատարակուին՝ հառաձայն իստոն խումբի համար ձայնագրուած եւ երգեհոնի ընկերակցութեամբ նոխացած: Յոյս ունինք որ այս ձեռնարկը մասամբ պիտի դիմաւորէ կարիքը մասնաւորաբար Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյ Դպրաց Դասերուն, որոնք գովելի մատուցութիւնն ունին մէկ հասորի մէջ ամփոփելու իրենց համար անհրաժեշտ ձայնագրեալ երգեր:

Եւ որովհետեւ այս հրատարակութիւնը յատկապէս ի մի ունի անգլիախօս գաղութներու մէջ բնակող զաւակները Հայ Եկեղեցւոյ, երգերու բառերուն ներքեւ անոնց անգլերէն տառադարձութիւնը կը գտնենք զետեղուած: Նմանապէս՝ բնագրին հանդիպակաց, զետեղուած կը տեսնենք անգլերէն բարգմանութիւնը, զոր այնքան խղճմտեղն է հմտորէն կատարած է Գեորգ Տ. Տիրան Արեւալիսկոպոս, նախկին Առաջնորդ Հայց. Եկեղեցւոյ Ամերիկայի Թեմին:

Բացի կարգ մը պարզումներէ եւ անհրաժեշտ փոփոխումներէ զորս երաժիշտը կատարած է օգտուելով իր ձեռքին սակ զգնուող սարքերակներէ, Արեւագալի երգերուն մայր եղանակը առ հասարակ նոյնն է Երուսաղէմի, Անթիլիասի եւ Պոլսոյ մայրավանքներուն (եւս հաւանաբար նաեւ Էջմիածնի) եւ այլ թմբու ծխական եկեղեցիներուն մէջ աւանդաբար երգուած եղանակներուն հետ: Ասոնց դաճեաւորումը եւ երգեհոնի բաժինով հոխացումը գործն է երգահան-երաժիշտ Վարդան Սարգսեանի, որ շնորհն ու զիտութիւնը ունի հայ եկեղեցական երգերուն հարազատ արտայայտութիւնը գտնելու եւ զանոնք ծաղկեցնելու՝ ներսէն, իրենց իսկ ենթահողին մէջ նիրհուն մեղեդիական ծխարձակումներով:

Այս հասորին հրատարակութեան առնչութեամբ, գնահատանքով եւ օրհնութեամբ կը յիշատակենք անունները երկու ընտանիքներու (Նիւ Եօրթէն եւ Ֆիլասելիայէն) որոնք գործնապէս ապացոյցը տուին Եկեղեցւոյ հանդէպ իրենց նուիրումին: Ասոնցմէ՝ Նիւ Եօրթ բնակող Տէր եւ Տիկին Փօլ Չափութեան հայրայրեցիքն ձայնագրեալ էջերու լուսափորագրեալ տախտակները, ի յիշատակ իրենց վաղամեռիկ թոռան՝ Կարօ Փօլ Թորոսեանի: Իսկ Տէր եւ Տիկին Արամ Արթարեան, Ֆիլասելիայէն, ներքապէս օժանդակեցին հասորիս սպագրութեան, յիշատակ մը արձանագրելով իրենց զաւակաց՝ Տէր եւ Տիկին Մարտիրոս Արթարեանի, եւ թոռներուն՝ Արամիկի եւ Լեւոնիկի անուան:

ԹՈՐԳՈՄ ՎՐԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ON THIS PUBLICATION

The present volume of the Hymns of [Sunrise Office with parts for a mixed chorus and with the organ accompaniment is the first attempt of its kind. With the publication of it, we hope partly to meet the wide demand of the Armenian Church Choirs of America for a comprehensive compilation of the music requisite for the choir members.

As the volume is primarily intended for the American-Armenian, an English transliteration is placed below the words under the music. Also, a conscientious translation of the classical Armenian text, carried out by His Eminence, Archbishop Tiran Nersoyan, former Primate of the American Diocese of the Armenian Church, appears on each corresponding page.

The melodies of the hymns, save for some slight alterations towards simplification, are the traditional ones chanted in the Armenian Cathedrals in Jerusalem, Antelias, Constantinople and other centres (most probably in Etchmiadsin as well). The composer, Warden Sarxian, who is one of the five students of the renowned Komitas Vardapet, helped by his sound knowledge of Armenian music and inspired by his outstanding musical intuition, has been able to create the harmony and atmosphere peculiar to the Armenian hymns. When we listen to the tunes being played on the organ, we intensely feel the undercurrents of thought expressed in the notes; we are thrilled so much that 'we forget ourselves to marble.'

Heartfelt thanks are due to Mr. & Mrs. Paul Chapoutian of Long Island, New York, who, in memory of their beloved grandson, Gary Paul Torosian, have supplied the forty-six photo-engraving plates used in this volume; and to Mr. & Mrs. Aram Attarian of Philadelphia, Pa., who, in order to encourage their children, Mr. & Mrs. Mardiros Attarian, and their grandchildren, Aram and Leon, in their love for the Church, have contributed to the publication of this volume.

TORKOM VARTABED MANOOGIAN

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ԱՐԵՒԱԳԱԼԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹԻՑ
ՈՐ ԿԱՏԱՐԻ Ի ԺԱՄ ԱՐԵՒԱԳԱԼԻՆ Ի ԴԷՄՍ ՀՈԳԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ԱՅԼ ԵՒ Ի ԴԷՄՍ ՅԱՐՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՐ ԵՐԵՒԵՑԱԻ ԱՇԱԿԵՐՏԱՅՆ

THE SUNRISE OFFICE

OF THE ARMENIAN CHURCH

THE ORDER OF THE COMMON PRAYER OF THE SUNRISE HOUR

ADDRESSED TO THE HOLY SPIRIT

ALSO IN-VIEW OF THE RESURRECTION OF CHRIST WHO APPEARED TO THE DISCIPLES

ՔԱՀԱՆԱՅՆ

Օրհնեալ Տէր մեր, Յիսուս Քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո, որպէս յերկինս՝ եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ սուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի հարէ: Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս: Ամէն:

(Սաղմոս ՀՈ, 17-19)

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան, զի յառաջ քան զարեւ է անուն նորա:

THE PRIEST:

Blessed be our Lord Jesus Christ; Amen.

Our Father, Who art in heaven, hallowed be Thy name; Thy kingdom come; Thy will be done, as in heaven also on earth. Give us this day our daily bread; and forgive us our debts, as we also forgive our debtors; and lead us not into temptation, but deliver us from evil. For Thine is the kingdom and the power and the glory unto the ages. Amen.

(Introit Ps. 72: 17-19)

The name of the Lord shall be blessed for ever; for His name is before the sun.

ՍԱՐԿԱՒԱԳՆ

Ի նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի, եւ ամենայն ազինք երանիցեն նմա:

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի, որ առնէ սքանչելիս միայն, եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան. լցցի փառօք նորա ամենայն երկիր. եզիցի՛, եզիցի՛:

ՔԱՀԱՆԱՅՆ

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

ՍԱՐԿԱՒԱԳՆ

Այժմ եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ եւս խաղաղութեան զաէր ազաչեացուք. ընկալ, կեցո, եւ սպորմեա:

ՔԱՀԱՆԱՅՆ

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

THE DEACON:

All the nations of the earth shall be blessed in Him; and all generations shall call Him happy.

Blessed be the Lord God of Israel Who only doeth wondrous things; and blessed be His glorious name for ever, and let the whole earth be filled with His glory. Amen, Amen.

THE PRIEST:

Glory to the Father and to the Son and to the Holy Spirit.

THE DEACON:

Now and for ever and unto the ages of ages. Amen.

Again in peace let us beseech the Lord. Receive, save and have mercy.

THE PRIEST:

Blessing and glory to the Father and to the Son and to the Holy Spirit; now and for ever and unto the ages of ages; Amen.



ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ԱՐԵՒԱԳԱԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ Գրի առաւ ու դաշնաւորեց Վ. ՍԱՐԳՍԵԱՆ:

HYMNS OF SUNRISE SERVICE OF THE ARMENIAN HOLY CHURCH

Harmonized by W. SARXIAN

Musical score for Soprani, Alti, Tenori, Bassi, and Piano. Includes lyrics in Armenian and English: '1. ՅԱՐԵՒԵ-ԼԻՑ HA-RE-VE - LITZ մինչ ի մուսս minch i moods.' Tempo: 'smoothly and softly', 'Հանդարտ ու մեղմ', '♩ = 72'.

Գովարանական eulogistic

S *ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ աւմի*
i hiu-si-so yén i ha-ra-vo. a-mé-

A *ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ*
i hiu-si-so yén i ha-ra-vo.

T *ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ աւմի*
i hiu-si-so yén i ha-ra-vo. a-mé-

B *ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ աւմի*
i hiu-si-so yén i ha-ra-vo. a-mé-

S *նայն ազկ եւ ազիւք յորհնու թիւն նոր օրհնեցէք*
nayn azk yén a-zink. horh-noo-tiun nor orh-né-tzék

A *եւ ազիւք յորհնու թիւն նոր օրհնեցէք*
yén a-zink. horh-noo-tiun nor orh-né-tzék

T *նայն ազիւք յորհնու թիւն նոր օրհնեցէք*
nayn a-zink. horh-noo-tiun nor orh-né-tzék

B *նայն ազիւք յորհնու թիւն նոր օրհնեցէք*
nayn a-zink. horh-noo-tiun nor orh-né-tzék

զարաւիչն առաւ ըստ որ ծագեաց
za-ra-richn a-ra-ra-dsotz vor dzak-yatz

զարաւիչն առաւ ըստ որ ծագեաց
za-ra-richn a-ra-ra-dsotz vor dzak-yatz

զարաւիչն առաւ ըստ որ ծագեաց
za-ra-richn a-ra-ra-dsotz vor dzak-yatz

զարաւիչն առաւ ըստ որ ծագեաց
za-ra-richn a-ra-ra-dsotz vor dzak-yatz

ըլ լոյս առի զաւանն այսոր յաշխարհս
uz-looys a-ré-ka-gan ay-sor hash-khars.

ըլ լոյս առի զաւանն այսոր յաշխարհս
uz-looys a-ré-ka-gan ay-sor hash-khars.

ըլ լոյս առի զաւանն այսոր յաշխարհս
uz-looys a-ré-ka-gan ay-sor hash-khars.

ըլ լոյս առի զաւանն այսոր յաշխարհս
uz-looys a-ré-ka-gan ay-sor hash-khars.